Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Հայոց լեզու և գրականություն» /12 դասաժամ/ «Մաթեմատիկա» /5 դասաժամ/, «Աշխարհագրություն» /6 դասաժամ /, «Կենսաբանություն» /4 դասաժամ/, և « Ռուսաց լեզու» /5 դասաժամ/ առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության **հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 17-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 23-ին՝ ժամը 10-ին՝«Աշխարհագրություն», ժամը 11 -ին՝ «Հայոց լեզու և գրականություն», ժամը 15-ին՝ «Կենսաբանություն» սեպտեմբերի 24-ին՝ ժամը 11-ին՝ «Մաթեմատիկա», ժամը 14 -ին՝ «Ռուսաց լեզու»,** Վանաձորի Հ.Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 35:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0322) 4-46-96 հեռախոսահամարով: